ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՅՈՒՅԻՉ

ԱՐՄԱՆ ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆ

Երջանկության սահմանման, որոնման, հիմնական հատկանիշների և որակական ցուցիչների հայտնաբերման խնդիրն այնքան հին է, որքան ինքը՝ մարդը: Դեռևս Արիստոտելը պնդում էր, որ ցանկացած արվեստ, ուսմունք, վարք կամ գիտակցված ընտրություն ձգտում է որոշակի բարիքի: Իսկ բարձրագույն բարիքը ի վերջո երջանկությունն է, որովհետև միայն երջանկությունն է, որին ձգտում են հանուն դրա և ոչ հանուն այլ բանի[1]: Երջանկության թեման կենտրոնականներից է ոչ միայն ողջ անտիկ փիլիսոփայության, այլև արևելյան փիլիսոփայական համակարգերում: Օրինակ՝ բուդդայականության առանցքային ելակետերից մեկը բոլոր կենդանի էակների երջանկության ձգտումն է: Որպես փիլիսոփայության հավերժական հիմնախնդիր՝ երջանկությունը որոնելու և գտնելու գործընթացը պահանջված իրողություն է յուրաքանչյուր հասարակության, սերնդի և անհատի համար՝ անկախ նրա ծագումից և կենսական կողմնորոշիչներից: Համապատասխանաբար՝ երջանկության հիմնախնդիրն իր վրա կրում է դարաշրջանների կնիքը և ըստ այդմ անընդհատ իմաստավորվում և վերաիմաստավորվում է փիլիսոփայական և կրոնական տարբեր ուսմունքներում:

Այդուհանդերձ, ինչքան էլ երջանկության ձգտումը համարենք մարդու համար «ատրիբուտային», սակավաթիվ են սոցիալ-փիլիսոփայական այնպիսի աշխատանքները, որտեղ երջանկությունը մարդու ներքին որոնումների տիրույթից դուրս է բերվում և քննարկվում որպես հասարակագիտական հիմնախնդիր: Այլ կերպ ասած՝ թեև երջանկության թեմային հանգամանալից անդրադարձ է կատարվել դեռևս անտիկ փիլիսոփայության՝ մարդու և հասարակության կառուցվածքին վերաբերող աշխատություններում, սակայն հասարակական կառավարման իրական գործընթացներում այն կա՛մ անտեսվել է, կա՛մ էլ ունեցել զուտ հայեցողական-գաղափարախոսական բնույթ: Այս հանգամանքը որոշակիորեն բացատրվում է նրանով, որ ինչքան էլ կարևորենք երջանկությունը՝ որպես մարդկային հիմնարար ձգտում, այդուհանդերձ մի կողմից երջանկությունը տարբեր կերպ է մեկնաբանվել փիլիսոփայական և մշակութային համակարգերում, մյուս կողմից այն ընկալվել է որպես որոշակի առումով «աննյութական» երևույթ, որը պարզ չէ, թե ինչպես

[1] Տե՛ս **Аристотель,** Никомахова этика, § 1;7, https://www.civisbook.ru/files/File/Aristotel_Nikomakhova.pdf

կարելի է «առարկայացնել» պետական կառավարման մոտեցումներում օգտագործելու համար: Սրանով է բացատրվում, թե ինչու ժամանակակից պետությունները, ավելի վերացական սկզբունքներից անցում կատարելով պետական կառավարման արդյունավետության գնահատման «չափելի» մոդելներին, հասարակական առաջադիմության չափորոշիչներից (հոգևոր, քաղաքական, սոցիալական, տնտեսական) ընտրեցին առավելապես տնտեսագիտական կողմնորոշմամբ հարացույցները (ՀՆԱ՝ համախառն ներքին արդյունք, մեկ անձին բաժին ընկնող միջին տարեկան եկամուտ, գործազրկության մակարդակ և այլն): Ակնհայտ է, որ տնտեսագիտության գործիքակազմը հնարավորություն է ընձեռում կոնկրետ հաշվարկների և չափումների միջոցով հստակորեն և օպերատիվորեն գնահատելու հասարակական տարբեր գործընթացները, այս կամ այն քաղաքականության հաջողությունը կամ ձախողումը:

Նոր ժամանակաշրջանում պետության կառավարման այլընտրանքային «չափելի» մոդելներից մեկը հեղինակել է դասական ուտիլիտարիզմի ներկայացուցիչ Ջ. Բենտամը (18-րդ դար): Նա հակադրվում էր իր ժամանակի՝ պետության կազմակերպման իրավական հայեցակարգերին: Բնական իրավունքի սկզբունքը, ըստ Բենտամի, լոկ հռետորաբանական անհեթեթություն է, և նրանք, ովքեր դիմում են այս հայեցակարգին, կատարում են նույն սխալը, ինչ ժամանակին անում էին միապետները և կրոնական առաջնորդները, երբ դիմում էին վերերկրային սկզբունքներին իրենց գործողությունները արդարացնելու համար: Հետևաբար, այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «բարիք»-ը, «պարտք»-ը, «իրավունք»-ը, թեև կարող են մեզ համար որոշակի նշանակություն ունենալ փիլիսոփայական առումով, սակայն իրական աշխարհում այս հասկացությունների իրական կրողներ գոյություն չունեն[2]:

Համաձայն ուտիլիտարիզմի այսպիսի ըմբռնման՝ անհրաժեշտ է պետական միջամտությունները մաքրել գաղափարական և բարոյական վերացական սկզբունքներից, իսկ քաղաքական և իրավական որոշումների ընդունումը «գետնին իջեցնել» հստակ էմպիրիկ տվյալների և ռացիոնալ-ապացուցողական փաստարկման միջոցով: Որպես վերացական հարացույցներին այլընտրանք՝ Բենտամն առաջարկում է երջանկության հասկացությունը՝ համարելով, որ այն մատնանշում է օբյեկտիվ ինչ-որ մի բան: Երջանկության երևույթը բացատրելու համար Բենտամը դիմում է որոշակի բնապաշտական ենթադրությունների. «Բնությունը դրել է մարդուն երկու ինքնավար ուժերի՝ ցավի և հաճույքի իշխանության ներքո: Դրանք են որոշում, թե ինչ պետք է անենք և ինչ կանենք: Դրանք են կառավարում այն ամենը, ինչ մենք անում ենք, ասում ենք և մտածում»[3]: Իսկ երջանկությունը, ըստ գիտնականի, կարելի

[2] Մեջբերումն ըստ՝ **Davies William,** The happiness industry. London, Verso, 2015, էջ 22:

[3] **Bentham Jeremy,** Introduction to the Principles of Morals and Legislation, chapter 1 https://www.laits.utexas.edu/poltheory/bentham/ipml/ipml.c01.html

բացատրել որպես հաճույքի գերակայություն ցավի նկատմամբ: Այսինքն՝ եթե նույնիսկ համարելու լինենք, որ երջանկությունն ինքնին օբյեկտիվ ֆիզիկական ֆենոմեն չէ, միևնույնն է, այն դրսևորվում է որպես հաճույքի զգացողությունների որոշակի արդյունք, իսկ այդ զգացողություններն էլ իրենց հերթին ունեն ֆիզիոլոգիական հստակ հիմքեր: Այսպիսի մեկնաբանությամբ երջանկությունը, ի տարբերություն վերացական այլ հասկացությունների, ներկայանում է որպես իրական և օբյեկտիվ երևույթ: Սա հնարավորություն է տալիս երջանկության հետազոտության հարցում դրսևորելու գիտական այնպիսի մոտեցում, ինչն անհնար է կիրառել, օրինակ, առաքինության նկատմամբ: Բենտամը կարծում էր, որ նման մոտեցումը կառավարություններին կտար բոլորովին նոր հիմքեր, որոնցից ելնելով՝ կձևավորվեին այնպիսի օրենքներ և քաղաքականություն, որոնք ռացիոնալ կերպով և իրապես կնպաստեին մարդկության բարեկեցությանը: «Առավելագույն երջանկություն հասարակության հնարավորինս շատ անդամների համար. սա՛ պետք է լինի յուրաքանչյուր կառավարության նպատակը». այսպիսին է ուտիլիտարիզմի՝ կառավարման փիլիսոփայության հիմնական սկզբունքը:

Իհարկե, ուտիլիտարիզմի տեսությունը անթերի չէ և քննադատվել է տարբեր մտածողների կողմից: Մասնավորապես առաջ են քաշվել փաստարկներ, որ հանրության համար առավելագույն երջանկության հարացույցը անտեսում է առանձին մարդուն՝ նրա կոնկրետ պահանջմունքներով, երջանկությունը այս համատեքստում ընկալվում է առավելապես հեդոնիստական տեսանկյունից (որպես հաճույքի համալիր դրսևորում), նպատակի առաջնայնությունը անտեսում է բուն գործողությունները (հնարավոր են դեպքեր, երբ մեկի հաճույքը կարող է ապակառուցողական նշանակություն ունենալ հանրույթի մնացած անդամների համար)[4], և որ հաճույքի զգացումն ինքնին թեև ունի ֆիզիոլոգիական հստակ հիմքեր, բայց հնարավոր չէ միանշանակ չափել այն և այլն:

Բայց այդ նույն տրամաբանությամբ կարելի է շատ ավելի սուր քննադատել կառավարման ֆինանսատնտեսագիտական կողմնորոշում ունեցող հայեցակարգերը, ինչը և եռանդագին արվում է վերջին տասնամյակներում: Օրինակ՝ դեռևս 1968 թվականին Ռոբերտ Քենեդին նախագահական քարոզարշավի ժամանակ արտասանած իր հայտնի ճառում ասել է. «Մեր ազգային համախառն արտադրանքի բաղադրիչներն են օդի աղտոտումը, ծխախոտի գովազդը և աղետի վայրից տուժածներին տեղափոխող շտապօգնության մեքենաները: Դրա մեջ են մտնում և՛ դռների կողպեքները, և՛ դրանք կոտրող մարդկանց բանտերը: Այն ներառում է սեքվոյաների անտառների և անկրկնելի բնության ոչնչացումը անկանոն քաղաքաշինության հետևանքով… Սակայն այն չի նախատեսում մեր երեխաների առողջությունը, ուսման

[4] Տե՛ս **Роулз Дж.,** Теория справедливости, Новосибирск, 1995, էջ 40:

որակը կամ այն ուրախությունը, որ նրանց պատճառում են խաղերը: Դրանում ոչ մի կերպ արտացոլված չեն պոեզիայի գեղեցկությունն ու ամուսնությունների կայունությունը, քաղաքական բանավեճերի մակարդակը կամ պաշտոնատար անձանց ազնվությունը: Այն հաշվի չի առնում ո՛չ խելքը, ո՛չ խիզախությունը, ո՛չ սովորելու հմտությունը: Եվ նույնիսկ մեր կարեկից լինելն ու երկրին նվիրվածությունը դրանում տեղ չեն գտել: Այլ խոսքերով՝ այն ընդգրկում է ամեն ինչ, բացի նրանից, ինչի համար իրոք արժե ապրել»[5]:

Այսօր արդեն կարելի է փաստել, որ եթե մակրոտնտեսական ցուցանիշները՝ որպես քաղաքականության արդյունավետության ցուցիչներ, լավ էին գործում արդյունաբերական տնտեսության փուլում, ապա հետարդյունաբերական դարաշրջանում դրանք ամենևին էլ բավարար չեն: Ֆինանսական ոգևորություն առաջացնող ՀՆԱ-ի բարձր ցուցանիշները իրենց հետևում թաքցնում են այնպիսի աղետներ, ինչպիսիք են աճող սոցիալական անհավասարությունը, շրջակա միջավայրի աղտոտումը, մարդկային հիմնական պահանջմունքների բավարարվածության աստիճանի նվազումը: Փաստ է նաև, որ ՀՆԱ-ն հաճախ աճում է պատերազմների ժամանակ և կամ էկոլոգիական աղետներից հետո՝ ի հաշիվ պետական ծախսերի ավելացման[6]: Չնայած այս քննադատություններին՝ այսօր էլ շատ տնտեսագետներ և քաղաքական գործիչներ իրենց գործունեությունը ծավալում են՝ հաշվի առնելով բացառապես ֆինանսատնտեսական գործոնը: Մինչդեռ քաղաքակրթական զարգացումների ներկա միտումները ցույց են տալիս, որ մակրոտնտեսական վերացարկումները և մարդկանց իրական կյանքը բավականին տարամիտում են, և այսօր ավելի ու ավելի շատ գործիչներ հակվում են այն մտքին, որ թեև երկրների մրցակցության մեջ չի կարելի հրաժարվել պետական որոշումների արդյունավետության չափորոշիչ հանդիսացող ներքին համախառն արտադրանքի ցուցիչից, սակայն անհրաժեշտ է այն համալրել նաև կյանքի որակից մարդկանց սուբյեկտիվ բավարարվածության գնահատականով, քանի որ դա կնպաստի պետական կառավարման մարմինների գործունեության արդյունքների օբյեկտիվ արտացոլմանը:

Վերոհիշյալ մտահոգությունները ձևավորեցին ներկայումս ծավալվող մի լայնածավալ ինտելեկտուալ շարժում, որը միտված է գիտական մեթոդներով հետազոտելու երջանկությունը և օգտագործելու այդ տվյալները հասարակական կառավարման գործընթացներում: Այս մոտեցման ակունքներում կարելի է տեսնել նախորդ դարի այնպիսի հայտնի հոգեբանների, ինչպիսիք են Ա. Մասլոուն, Կ. Ռոջերսը, Գ.

---

[5] Bobby Kennedy on GDP: 'measures everything except that which is worthwhile' https://www.theguardian.com/news/datablog/2012/may/24/robert-kennedy-gdp

[6] Տե՛ս **Родионов-Зражевский А.** От эпохи валового внутреннего продукта к "экономике счастья" // Проблемы современной экономики, № 3 (47), 2013, էջ 127:

Օլպորտը: Իսկ 1998 թվականին Մ. Սելիգմանը պաշտոնապես հայտարարեց «պոզիտիվ հոգեբանություն» նոր գիտակարգի ձևավորման մասին, որի խնդիրն էր ժամանակակից գիտության մեթոդներով ուսումնասիրել մարդկային բարեկեցության ֆենոմենը և ուղիներ առաջարկել այն բարելավելու համար: Ժամանակակից էմպիրիկ հետազոտություններում «երջանկություն» հասկացությունը ավելի հաճախ փոխարինվում է «սուբյեկտիվ բարեկեցություն» հասկացությամբ (սույն հոդվածում այս հասկացությունները օգտագործվում են որպես հոմանիշներ), որը տվյալ դեպքում ոլորտի մասնագետների մեծ մասի կողմից ընդունվում է որպես մարդու դրական հոգեվիճակներն ու գնահատականներն ընդգրկող հավաքական հասկացություն, և որը, ըստ էության, ներառում է երջանկության՝ փիլիսոփայության պատմության մեջ ձևավորված հիմնական հայեցակարգերը, որոնք կարելի է բաժանել երկու մեծ խմբի.

- երջանկությունը՝ որպես վիճակ, որը ներառում է մարդու դրական հույզերի և զգացողությունների (հաճույք, ուրախություն, հարմարավետություն և այլն), լայն տիրույթը (երջանկության հեդոնիստական ըմբռնում),
- երջանկությունը՝ որպես գործընթաց, որի բաղադրիչներն են իմաստալից նպատակների առկայությունը և արժանապատիվ կյանքը (երջանկության էվդեմոնիստական մոտեցում):

Ոլորտի շատ հետազոտողներ այսօր կարծում են, որ սուբյեկտիվ բարեկեցությունը շատ ավելին է, քան պարզապես երջանկության զգացումը և ներառում է այն գնահատականների ամբողջությունը, որոնցով մարդն արժևորում է իր կյանքը, իր մարմնի և մտքի հետ կատարվող իրադարձությունները, ինչպես նաև իր կենսական միջավայրի ազդեցությունը[7]: Նման գնահատականները սուբյեկտիվ են՝ որպես աշխարհից ունեցած ներքին փորձառության արդյունք, անմիջականորեն չեն պահանջում արտաքին ֆենոմենների գնահատական և բարեկեցության բաղադրիչ են, քանի որ առնչվում են հաճելիության և ցանկալիության զգացումներին:

Սուբյեկտիվ բարեկեցության հետազոտության թերևս ամենատարածված մեթոդը «Քանթրիլի սանդուղքն» է (Cantrill ladder), որը լայնորեն օգտագործում է, օրինակ, հանրային կարծիքի ուսումնասիրության «Գելափ» (Galllup) ընկերությունը համաշխարհային հարցումներ կատարելիս: «Քանթրիլի սանդուղքի» հիմնական հարցն այսպիսին է. «Հաշվի առնելով ամեն ինչ՝ ինչքանո՞վ եք բավարարված ձեր ներկա կյանքով»: Պատասխանողը տալիս է իր կյանքի ներքին գնահատականը 0-10 միջակայքում ընկած թվով, որտեղ 10-ը սկզբունքորեն պատկերացնելի հնարավոր լավագույն կյանքն է, իսկ 0-ն՝ վատագույնը: Հարց-

[7] Տե՛ս **Diener E.,** Guidelines for national indicators of subjective well-being and ill-being. Journal of Happiness Studies, 2006, 7(4), էջ 400:

ման վերջնական արդյունքները ըստ երկրների կլորացվում են և օգտագործվում երջանկության միջազգային ինդեքսներ կազմելու համար: Սուբյեկտիվ բարեկեցության հետազոտման հարցերի երկրորդ խումբը ներառում է դրական և բացասական հույզերի առկայությունը կոնկրետ ժամանակահատվածում: Որոշ հետազոտողներ, սուբյեկտիվ բարեկեցության առավել ճշգրիտ չափման համար գնահատման և հուզականության հարցերից բացի, ավելացնում են ևս մեկ՝ երրորդ չափում, որը պայմանականորեն կարելի է անվանել հոգեբանական էվդեմոնիա (ծաղկում, բարգավաճում), և որի հարցերը առնչվում են մարդու պահանջներին ու նպատակներին (օրինակ՝ «Ինչքանո՞վ եք արժեքավոր համարում այն ամենը, ինչ դուք անում եք կյանքում»): Այսինքն՝ սուբյեկտիվ բարեկեցության արդի չափումները հիմնվում են մարդու կողմից իր կյանքի հոլիստիկ գնահատականի վրա և ներառում են թե՛ հուզական, թե՛ կոգնիտիվ բաղադրիչների լայն տիրույթ:

Սուբյեկտիվ բարեկեցության չափելիության հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է մի կողմից պետության ընդունած որոշումների արդյունավետության գնահատման չափորոշիչների ամբողջացման, մյուս կողմից՝ յուրաքանչյուր մարդու երջանիկ լինելու բնական ցանկության և բնակչության սոցիալական առողջության ու կյանքի որակի բարելավման անհրաժեշտությամբ: Նույնիսկ տնտեսագիտության մեջ ներկայումս հայտնվել է մի ուղղություն, որը կոչվում է «երջանկության տնտեսագիտություն»: Մոտեցումը կտրուկ փոխում է տնտեսական և սոցիալական գնահատականների ավանդական տրամաբանությունը՝ շեշտը դնելով սուբյեկտիվ բարեկեցության վրա և ըստ այդմ գնահատելով մարդկանց կյանքի օբյեկտիվ պայմանների որակը: Տնտեսությունն այստեղ դիտարկվում է նախ և առաջ հումանիստական չափումներով՝ որպես սոցիումի և յուրաքանչյուր անհատի բարեկեցության ստեղծման գործիք: Այս տեսանկյունից կարևոր է հասկանալ կոնկրետ հասարակության մեջ օբյեկտիվ (նյութական) և սուբյեկտիվ բարեկեցությունների ներքին կապը:

Առօրյա տրամաբանությունը սովորաբար ենթադրում է, որ երջանկության մակարդակը ուղիղ համեմատական է բարեկեցության չափին: Սակայն իրական կյանքում միշտ չէ, որ այդպես է: Օրինակ՝ 1974 թ. ամերիկացի տնտեսագետ Ռ. Իստեռլինը իր հետազոտություններում ցույց տվեց, որ թեև ԱՄՆ-ում, այլ խմբերի հետ համեմատած, հարուստ ամերիկացիների մեջ առավել շատ են իրենց երջանիկ համարողները, սակայն երբ համեմատում ենք տարբեր երկրների՝ «Քանթրիլի սանդուղքով» ստացված միջին տվյալները, պարզվում է, որ երջանկության և հարստության միջև չկա միանշանակ կախվածություն (տե՛ս աղյուսակը)[8]:

[8] Տե՛ս **Easterlin R.,** Does Economic Growth Improve the Human Lot? Some Empirical Evidence // Nations and Households in Economic Growth, 1974, էջ 105, https://doi.org/10.1016/B978-0-12-205050-3.50008-7

Աղյուսակ

1959-1962 թթ. մի շարք երկրների երջանկության և ՀՆԱ հարաբերակցությունը (ըստ Ռ. Իստեռլինի տվյալների)

Երկիր	Անձնական երջանկության գնահատական	1 անձի հաշվով ՀՆԱ (ԱՄՆ դոլար)
ԱՄՆ	6.6	2790
Կուբա	6.4	516
Եգիպտոս	5.5	225
Իսրայել	5.3	1027
Ճապոնիա	5.2	613
Հարավսլավիա	5.0	489
Պանամա	4.8	371
Նիգերիա	4.8	134
Բրազիլիա	4.6	375
Լեհաստան	4.4	702

Այսինքն՝ կյանքից բավարարվածության աճը միշտ չէ, որ ուղղակիորեն կապված է բարեկեցության աճի հետ, և համաձայն Իստեռլինի պարադոքսի՝ բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտների աճը երջանկության աճ է բերում, բայց միայն մինչև որոշակի մակարդակ: Սա կարելի է բացատրել հետևյալ կերպ. տնտեսական զարգացման ցածր մակարդակի պայմաններում անգամ ոչ մեծ տնտեսական շահույթը առաջացնում է սուբյեկտիվ բավարարվածության բարձր մակարդակ: Ուստի յուրաքանչյուր անհատի համար առաջնային է դառնում տնտեսական եկամտի ավելացումը, իսկ հասարակության համար՝ տնտեսական աճը: Սակայն դա շարունակվում է մինչև այն պահը, երբ հասարակությունը հասնում է բարեկեցության որոշակի շեմի: Այս կետից հետո տնտեսական հետագա աճը հանգեցնում է կյանքի տևողության և անհատական բարեկեցության սոսկ նվազագույն մեծացման: Այս դեպքում մարդկանց մեծամասնության համար ֆիզիկական գոյատևումը դառնում է ինքնին բնական երևույթ, և այդպիսի հասարակություններում ի հայտ են գալիս զգալի թվով հասարակական խմբեր, որոնց համար տնտեսական շահույթն այլևս չի ապահովում սուբյեկտիվ բարեկեցության հետագա աճ, որովհետև այդ պահից սկսած՝ ավելի կարևոր են դառնում կյանքի ոչ տնտեսական չափումները, որոնք էլ պայմանավորում են, թե ինչքան երկար և լավ կապրեն մարդիկ: Նման տեղաշարժը կապված է անհատական մակարդակում կատարվող արժեքների նշանակալի փոփոխության հետ. տեղի է ունենում ուշադրության շեղում տնտեսական և ֆիզիկական անվտանգությունից դեպի ինքնադրսևորման արժեքներ, որոնք առաջին պլան են մղում մասնակցությունը հանրային կյանքին, կարծիքների արտահայտման ազատությունը և կյանքի ընդհանուր որակը: Այս տեսակետը հաստատում են նաև վերջին տասնամյակում իրականացված մի շարք հետազո-

տություններ, որոնք ցույց են տալիս, որ թույլ զարգացած երկրներում հանրության երջանկության մակարդակը մեծապես պայմանավորված է տնտեսական ինստիտուտներով, մինչդեռ զարգացած երկրներում երջանկության մակարդակի վրա առավելապես մեծ ազդեցություն են թողնում քաղաքական ինստիտուտները[9]:

Իստեռլինի պարադոքսը թեև ժամանակին ենթարկվեց մի շարք քննադատությունների, սակայն այսօր էլ լուրջ մտորումների տեղիք է տալիս: Տնտեսական գործոնների ոչ միանշանակ կապը կյանքից բավարարվածության հետ դրսևորվում է, օրինակ, այն բանով, որ արևմտյան երկրների՝ վերջին տասնամյակներին շարունակվող տնտեսական աճը նկատելի բարելավում չի թողել կյանքից անհատապես բավարարվածության գնահատականի վրա[10]: Մինչդեռ հասարակության երջանկության մասին հոգատարությունը պետության քաղաքական որակյալ ռազմավարության ցուցիչ է: Այսպես է կարծում նաև երջանկության գիտական հետազոտման ժամանակակից առաջամարտիկ Ռութ Վինհովենը, որը Երջանկության տվյալների համաշխարհային բազայի (World Database of Happiness) հիմնադիր տնօրենն է և «Երջանկության հետազոտման ամսագրի» (Journal of Happiness Studies) հիմնադիրն ու գլխավոր խմբագիրը: Ըստ նրա՝ եթե կառավարությունը հոգ է տանում ոչ միայն ֆինանսական բարեկեցության, այլև երջանկության մասին, սա նշանակում է, որ թե՛ իշխանության և թե՛ կյանքի որակը բարձր են[11]: Ըստ այդմ՝ 21-րդ դարասկզբից բավականին «տեսանելի» են դարձել այնպիսի հետազոտական նախաձեռնությունները, որոնք փորձում են մշակել երջանկության գնահատման համընդգրկուն և գործուն համակարգեր: Օրինակ՝ 2006 թվականին «Նոր տնտեսագիտության հիմունքներ» (New economics foundation) կազմակերպությունը ներկայացրեց «Երջանիկ մոլորակի ցուցիչը» (Happy planet index), որի հաշվարկման համար օգտագործվում են երեք ցուցանիշներ՝ կյանքից մարդկանց սուբյեկտիվորեն բավարարված լինելը, ակնկալվող երկարակեցությունը և, այսպես կոչված, «բնապահպանական հետքը»: Երջանկության համաշխարհային ինդեքսը հիմնված է համընդհանուր այնպիսի սկզբունքների վրա, որոնց համաձայն՝ մարդկանց մեծամասնությունն ուզում է ապրել երկար և լիարժեք կյանքով, իսկ իշխանություններն էլ ձգտում են անել հնարավոր ամեն ինչ՝ իրենց քաղաքացիների առավելագույն բարեկեցությանը հասնելու համար՝ խելամտորեն օգտագործե-

---

[9] Տե՛ս **Rode M.,** Do Good Institutions Make Citizens Happy, or Do Happy Citizens Build Better Institutions?// J Happiness Stud, 2013, № 14, էջ 1481 (2013). https://doi.org/10.1007/s10902-012-9391-x

[10] Տե՛ս **Diener E., Suh E.,** Measuring quality of life: economic, social, and subjective indicators // Social Indicators Research, 1997, ¨ 40, էջ 209: https://doi.org/10.1023/A:1006859511756

[11] Տե՛ս **Винховен Рут,** Счастье — это как насморк, https://expert.ru/russian_reporter/2008/23/vinhoven/

լով ունեցած ռեսուրսները, չվնասելով շրջակա միջավայրը: Այս հաշվարկման համակարգով 2020-ին «երջանիկ երկրների» վարկանիշային ցուցակը գլխավորում են Լատինական Ամերիկայի երկրները (Կոստա-Ռիկա, Մեքսիկա, Կոլումբիա), շատ բարձր դիրքերում են ասիական մի շարք երկրներ (Բանգլադեշ, Թայլանդ, Ինդոնեզիա), որոնց մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն այնքան էլ բարձր չէ:

Մեկ այլ հայտնի միջազգային հետազոտական նախագիծ է յուրաքանչյուր տարի հրապարակվող «Երջանկության համաշխարհային զեկույցները» (https://worldhappiness.report/): Այստեղ փորձ է արվում «Գելափի» կողմից տարբեր երկրներում իրականացվող կյանքի ինքնագնահատականի հարցումների արդյունքները բացատրել 6 տարբեր բաղադրիչներով (ՀՆԱ, սոցիալական աջակցություն, առողջ կյանքի ակնկալիք, սոցիալական ազատություններ, առատաձեռնություն, կոռուպցիայի բացակայություն): Այս զեկույցները ևս ցույց են տալիս, որ երկրների նյութական հարստությունը միշտ չէ, որ պայմանավորում է սուբյեկտիվ բարեկեցության ավելի բարձր մակարդակը: Օրինակ՝ 2018 թ. զեկույցում հատուկ նշվում է այն հանգամանքը, որ Լատինական Ամերիկայի երկրներում դրական հույզերի մակարդակը ավանդաբար շատ ավելի բարձր է, քան կարելի է կանխատեսել՝ ելնելով այլ երկրների բարեկեցության վերաբերյալ համանման հարցման տվյալներից և տարածաշրջանում եկամուտների ընդհանուր մակարդակից: Հետազոտողները փորձում են Լատինական Ամերիկայի կենսուրախության «ավելցուկը» բացատրել այս երկրների սոցիոմշակութային այնպիսի առանձնահատկություններով, ինչպիսիք են, օրինակ, ընտանեկան ջերմության բարձր մակարդակը և սոցիալական հարաբերությունների աջակցող բնույթը[12]:

Կարևոր է այն հանգամանքը, որ ներկայումս սուբյեկտիվ բարեկեցությանը մոտենում են ոչ միայն որպես տեսական-հետազոտական, այլև որպես քաղաքականության մեջ նորարարական և հեռանկարային ոլորտի զարգացման պետական նախաձեռնությունների, որոնց փորձերը վերջին ժամանակներում ավելի ու ավելի հաճախակի են:

Այս հարցում յուրօրինակ առաջամարտիկ է Բութանը, որը դեռևս 20-րդ դարի կեսերից ձեռնամուխ եղավ կառուցելու նոր տնտեսություն՝ հիմնված իրենց կողմից ներմուծված «համախառն ազգային երջանկության» հայեցակարգի վրա: Բութանի համախառն ազգային երջանկության հիմնական բաղադրիչներն են՝ 1) տնտեսական աճը և սոցիալ-տնտեսական ազնիվ զարգացումը, որը նպաստում է սոցիալական հավասարությանը, 2) շրջակա միջավայրի պահպանումը և բնական պաշարների հավասարակշռված օգտագործումը, 3) մշակութային ժառանգության պահպանումը և մշակութային արժեքների խթանումը, 4) պետական կառավարման որակը և իշխանության ապակենտրոնացումը:

[12] Տե՛ս **Rojas Mariano,** Happiness in Latin America Has Social Foundations // World Happiness Report , 2018, էջ 115:

Այս գործոններն արտացոլող դրույթները մտցվել են Բութանի Թագավորության 2008 թվականին ընդունված Սահմանադրության մեջ, որտեղ ամրագրված է հետևյալը. «Պետությունը ձեռնարկում է բոլոր հնարավոր միջոցները՝ ամբողջ ազգի երջանկության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու և դրանք պահպանելու համար»:

Երջանկությունը դիտարկելով որպես տնտեսական, սոցիալական, զգացմունքային և մշակութային պահանջմունքների հավասարակշիռ բավարարման ցուցիչ՝ Բութանի կառավարությունը զարգացման իր քաղաքականության հիմքում դրել է նյութականի և հոգևորի հավասարակշռության պահպանումը: Բութանի զարգացման հայեցակետը հիմնված է բուդդայական այն պատկերացման վրա, որ սխալ ինքնընկալումը մարդուն տանում է դեպի եսասիրական ցանկություններ, մեծամտություն և ինքնամեծարում՝ խոչընդոտելով նրա ազատությունն ու երջանկությունը[13]: Բութանի կառավարությունը երկրի բյուջեի շուրջ քառորդ մասը ծախսում է առողջապահության և կրթության վրա, մշակութային ժառանգությունը պահպանելու նպատակով սահմանափակել է երկիր այցելող զբոսաշրջիկների թիվը, շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների խնայողության նպատակով արգելել է անմշակ փայտանյութի արտահանումը: Հատկանշական է նաև այն փաստը, որ թեև այսօր Բութանը իր ՀՆԱ-ով աշխարհում զբաղեցնում է բավականին համեստ դիրք, բայց այն մեր մոլորակի միակ պետությունն է, որը բնութագրվում է որպես «կարբոն-նեգատիվ», այսինքն՝ Բութանի հետզհետե աճող կանաչ անտառները արդեն ավելի շատ սպառում են ածխածնի երկօքսիդ, քան արտանետվում է մթնոլորտ երկրի տնտեսական գործունեության (արդյունաբերություն, տրանսպորտ) հետևանքով:

Արևմուտքում ներքին համախառն արտադրանքին այլընտրանք գտնելու առաջին լուրջ փորձը կատարվեց 2008 թվականին Ֆրանսիայում: Երկրի նախագահ Ն. Սարկոզին ստեղծեց տնտեսական նվաճումների և սոցիալական առաջընթացի հաշվարկման հատուկ հանձնաժողով, որը գլխավորում էին տնտեսության ղեկավարման ավանդական մեթոդների հանդեպ քննադատական վերաբերմունքով հայտնի նոբելյան դափնեկիրներ Ա. Սենը և Ջ. Ստիգլիցը: Հանձնաժողովն առաջարկեց կյանքի որակի գնահատման համար հիմք ընդունել մի շարք ցուցիչներ, ինչպիսիք են զարգացման կայունությունը, անվտանգությունը, մարդկանց քաղաքական իրավունքները, բնապահպանության վիճակը և այլն: Հանձնաժողովի աշխատանքի արդյունքների հիման վրա Սարկոզին առաջարկեց երկրների զարգացումը գնահատելու չափորոշիչներ սահմանել երջանկությունը և առողջապահական ծառայությունների մատչելիությունը և մյուս պետություններին կոչ արեց հետևել

[13] Տե՛ս **Пряжникова О.** Благосостояние: буддистское измерение // Экономические и социальные проблемы России, № 1, 2015, էջ 127:

Ֆրանսիայի փորձին: Այսօր էլ Ջ. Ստիգլիցը պարբերաբար հանդես է գալիս հոդվածներով, որտեղ խոսում է այն մասին, որ ներկա աշխարհի երեք խոշոր՝ կլիմայի, անհավասարության և ժողովրդավարության ճգնաժամերը հնարավոր չէ լուծել ժամանակակից տնտեսագիտական մոդելների տիրույթում: 2008 թվականի տնտեսական ճգնաժամը այդ հարացույցների թերիության լավագույն ապացույցներից մեկն է[14]:

2010 թ. Մեծ Բրիտանիայի վարչապետ Դևիդ Քեմերոնի նախաձեռնությամբ կառավարությունը հասարակության սուբյեկտիվ բարեկեցության հետազոտման նպատակով հատկացրեց երկու միլիոն ֆունտ ստեռլինգ: Այս քայլով Քեմերոնը ևս միացավ քաղաքական գործիչների այն բանակին, որոնք կարծում են, որ առանձին վերցրած ՀՆԱ-ն այլևս երկրի առաջընթացի մակարդակի որոշման լիարժեք մեթոդ չէ: Իբրև ՀՆԱ-ն մեծացնող, բայց կյանքի որակը վատացնող տնտեսական գործունեության օրինակներ Քեմերոնը բերել է էժանագին օղու վաճառքը, զանգվածային ներգաղթը և անպատասխանատու գովազդը: «Մինչդեռ բարեկեցությունը չի կարելի չափել փողերով կամ վաճառել շուկաներում: Այն մեր շրջապատի գեղեցկությունն է, մեր մշակույթի որակը և մարդկային հարաբերությունների ամրությունը: Հավատում եմ, որ հասարակության բարեկեցության զգացողության բարելավումը մեր ժամանակների հիմնական քաղաքական մարտահրավերն է»,- հայտարարեց վարչապետը[15]:

2011 թ. Բութանի և 50 այլ երկրների համահեղինակությամբ երջանկության թեման հայտնվեց ՄԱԿ-ի օրակարգում. ընդունվեց «Երջանկություն. համալիր մոտեցում զարգացմանը» հայեցակարգը, որի համաձայն՝ երջանկությունը պետք է դառնա երկրի զարգացածության ցուցանիշ: Այդ որոշումը կոչ է անում մյուս երկրներին մշակել երջանկության չափման սեփական մեթոդներ և դրանք ներկայացնել ՄԱԿ-ին: Կոչին անմիջապես արձագանքեցին Չինաստանի իշխանությունները՝ որոշում կայացնելով երջանկության սեփական ցուցիչ մտցնելու մասին: Այն հիմնված է ինչպես ավանդական տնտեսական, այնպես էլ, նոր և անսովոր չափորոշիչների վրա: Օրինակ, ըստ այս մոտեցման՝ պետական ծառայողի աշխատանքի արդյունավետությունը պետք է չափվի ոչ թե կառուցված երկնաքերների քանակով, այլ նրանով, թե ինչքանով են երջանիկ նրա կառավարման ներքո ապրող մարդիկ: Այս սկզբունքի հիման վրա Չինաստանում արդեն կայացել է մի քանի ցուցադրական պաշտոնանկություն:

Սկսած 2010 թվականից՝ բարեկեցության հետազոտության և բարելավման քաղաքական նախաձեռնություններին այս կամ այն կերպ

---

[14] Տե՛ս **Stiglitz Joseph,** It's time to retire metrics like GDP. They don't measure everything that matters. https://www.theguardian.com/commentisfree/2019/nov/24/metrics-gdp-economic-performance-social-progress

[15] Տե՛ս David Cameron aims to make happiness the new GDP. https://www.theguardian.com/politics/2010/nov/14/david-cameron-wellbeing-inquiry

միացել են այնպիսի երկրներ, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Ճապոնիան, Իտալիան, Էկվադորը, Բոլիվիան, Բելառուսը[16]: Այս համատեքստում քաղաքական վերջին դրվագներից մեկը 2019 թ. Իսլանդիայի վարչապետի հայտարարությունն էր[17], որով կառավարությանը կոչ էր արվում առաջնահերթությունները տնտեսական աճից տեղափոխել դեպի շրջակա միջավայրի կայունություն և ընտանիքի հետ անցկացվող ժամանակի ավելացում: Կոչին արձագանքեցին Շոտլանդիայի և Նոր Զելանդիայի վարչապետները՝ միանալով բարեկեցության այնպիսի օրակարգի առաջխաղացմանը, որը կկառուցվի ավանդական ՀՆԱ-ից դուրս գտնվող սոցիալական ցուցիչների վրա:

Այս նախաձեռնություններից անմասն չի մնում նաև մերօրյա Հայաստանը: «Թավշյա» հեղափոխությունից անմիջապես հետո քաղաքական ամբիոններից երջանկության մասին սկսեց ակտիվորեն խոսել ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանը: Մասնավորապես իր ելույթներից մեկում նա նշեց, որ դեռևս 2014-2015 թթ., երբ հիմնվում էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, իրենք կարծում էին, որ «մարդու իրավունքների պաշտպանությունը այլևս բավարար չէ մեր ժամանակակից պայմանների համար: Մարդու իրավունքները և ազատությունները կարող են պաշտպանված լինել, բայց մարդը երջանիկ չլինի: Հետևաբար պետք է քաղաքական խնդիրը լինի՝ ստեղծել պայմաններ մարդու երջանկության համար»[18]: Այս նույն հանգամանքով է պայմանավորված 2018 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններում «Իմ քայլը» դաշինքի կարգախոսը՝ «Երջանիկ անհատ, հոգատար հանրություն, հզոր պետություն»: Դրանով մարդու երջանկությունը ներկայացվեց որպես քաղաքական օրակարգի բարձրագույն նպատակ:

Ընդունելով այս մոտեցումների կարևորությունը՝ այդուհանդերձ պետք է փաստենք, որ ՀՀ-ում դրանք դեռևս առավելապես մնում են որպես քաղաքական հայտարարություններ և ըստ էության չեն հիմնավորվում բարեկեցության համապատասխան հետազոտություններով և պետական նախաձեռնություններով: Մինչդեռ բարեկեցության մակարդակի հստակեցումը և բարելավումը ենթադրում են հստակ փաստական բազա և հետևողական մշտադիտարկում, որը կարող է տեղեկացնել որոշումներ ընդունողներին և հանրությանը, թե որտեղ, երբ և ում համար է կյանքի ինքնագնահատականը բարձրանում:

Հանուն արդարության պետք է նշել, որ չնայած պետությունների ջանքերին՝ սուբյեկտիվ բարեկեցության գնահատման հարցում առկա են մի շարք դժվարություններ: Խոսքը վերաբերում է թե՛ միասնական

---

[16] Տե՛ս **Нестерович Д.** Новые подходы к экономическому росту: акцент на качество // էջ 30-31:

[17] Տե՛ս https://www.collective-evolution.com/2019/12/06/prime-minister-of-iceland-calls-for-prioritizing-well-being-of-citizens-over-gdp՝

[18] «Պետք է քաղաքական խնդիրը լինի՝ ստեղծել պայմաններ մարդու երջանկության համար». Նիկոլ Փաշինյանի ելույթից, https://www.youtube.com/watch?v=gmx4VSHxe8g

մեթոդաբանության և թե՛ տվյալների անհրաժեշտ բազաների բացակայությանը: Մասնավորապես, բարեկեցության վիճակագրական մոտեցումներն ունեն մի շարք սահմանափակումներ[19].

- երջանկության ցուցիչը հնարավոր չէ հաշվարկել նույնքան օպերատիվորեն և արագ, ինչպես ներքին համախառն արտադրանքը,
- երջանկությունը ենթաբաղադրիչներով բացատրելիս տարբեր մոդելներ ընտրում են տարբեր տրամաբանություններ,
- հարցումները համարժեքորեն չեն արտացոլում տարբեր երկրների առանձնահատկությունները, մշակութային տարբերությունները, պատմական փորձը և ընթացիկ վիճակը: Այս առումով, օրինակ, «Երջանկության համաշխարհային զեկույցի» վարկանիշային աղյուսակներում նույն Բութանը զբաղեցնում է բավականին միջին դիրք:

Այս ամենով հանդերձ՝ վերջին տարիներին երջանկությունը գիտական մեթոդներով հետազոտելու ուղղությամբ շարժման ձևավորման փաստն ինքնին վկայում է այդ խնդրի հույժ կարևորության և դրա հանդեպ հասարակության, գիտության և իշխանությունների մեծացող հետաքրքրության մասին: Սուբյեկտիվ բարեկեցության չափումների հիմնական առավելությունն այն է, որ դրանք կառուցվում են անհատի անմիջական և կարևոր փորձառությունների հիման վրա: Քանի որ օբյեկտիվ սոցիալական ցուցիչների գերակշիռ մասը անուղղակիորեն են առնչվում նրան, թե ինչպես են մարդիկ վերաբերվում իրենց կյանքի պայմաններին, սուբյեկտիվ բարեկեցության չափումները տրամադրում են կարևոր լրացուցիչ միջոցներ, որոնք կարող են օգտագործվել օբյեկտիվ ցուցիչներից բխող կյանքի պատկերը գնահատելու համար[20]: Ըստ այդմ, երջանկության չափման և օգտագործման հիմնախնդրի քննարկումը հրատապ է դարձել սոցիոհումանիտար գիտության ամենատարբեր ոլորտների հետազոտողների աշխատանքներում: Փորձելով համադրել ոլորտում առկա մոտեցումները՝ 2013-ին հրատարակվեց «OECD սուբյեկտիվ բարեկեցության չափման ձեռնարկը» (OECD Guidelines on Measuring Subjective Well-being), որը, ամփոփելով միջազգային փորձը և հիմնական միտումները, վերահաստատում է այն միտքը, որ սուբյեկտիվ բարեկեցության չափումները կարող են մեզ տալ հիմնավոր և իմաստալից տեղեկություններ՝ հասարակության զարգացման գործընթացներում դրանք ներառելու համար: Այս ձեռնարկի հեղինակները ևս այն կարծիքին են, որ ինչպես ինքնագնահատականի հիման վրա անցկացվող այլ չափումներ, սուբյեկտիվ բարեկեցության վերաբերյալ հարցումների արդյունքները, կախված չափման մեթոդաբանությունից, կարող են զգալիորեն տատանվել, և ըստ այդմ՝ կոնկ-

---

[19] Տե՛ս **Шматова Ю., Морев М.** Измерение уровня счастья: литературный обзор российских и зарубежных исследований// Экономические и социальные перемены: факты, тенденции, прогноз, № 3 (39), 2015, էջ 141-162:

[20] Տե՛ս **Diener E., Suh E.,** նշվ. հոդվածը, էջ 205:

րետ երկրում հարցումներ իրականացնելիս անհրաժեշտ է ուշադիր լինել չափմանն առնչվող մի շարք կարևոր հարցադրումների նկատմամբ, քանզի համադրելի արդյունքներ ունենալու համար անհրաժեշտ է կիրառել հնարավորինս միանման մեթոդներ[21]: Նման ստանդարտացումը ենթադրում է պետությունների և հետազոտողների հետագա համագործակցություն: Այսպիսի համագործակցությունը թերևս անխուսափելի է, քանի որ թեև երջանկության գնահատման այլընտրանքային ցուցիչներն ու ցուցանիշները առայժմ ի զորու չեն ամբողջությամբ փոխարինելու հասարակության կառավարման տնտեսական հայեցակարգերը, բայց դրանց՝ ավանդական մոտեցումները օժանդակող և լրացնող դերն անտեսել ևս արդեն հնարավոր չէ:

Երջանկության չափման և ստացված արդյունքների կիրարկման համընդհանուր մեթոդ գտնելու՝ տարբեր երկրների կառավարությունների և գիտնականների փորձերը ներկայումս ձևավորել են տեսական և պրակտիկ գործունեության մի առանձին ոլորտ, որը սոցիալական արդի դինամիկայի պայմաններում վեր է հանում հասարակական նոր փոխկապվածություններ և օրինաչափություններ: Սուբյեկտիվ բարեկեցության խնդիրն այսօր սերտորեն կապակցվում է նաև տնտեսագիտության և բժշկության հետ: 1960-ականներից սկսած՝ արևմտյան երկրներում ամրագրվել է այն փաստը, որ տնտեսական կյանքն ավելի ու ավելի շատ է պայմանավորվում բնակչության հոգեբանական և հուզական վիճակով: Համապատասխանաբար՝ դեպրեսիան և հոգեսոմատիկ խնդիրները ոչ միայն վկայում են անհատի «տառապանքի» մասին, այլև յուրահատուկ մարտահրավեր են դառնում հանրային քաղաքականություն մշակողների և կառավարիչների համար՝ նախ և առաջ որպես տնտեսական խնդիր: Այսօր արդեն կարելի է գնահատել օտարման և մարդու՝ իրեն դժբախտ զգալու դրամային համարժեքը: Այսպես, «Գելափ» ընկերության վերլուծության համաձայն՝ աշխատողների նման հոգեվիճակը ԱՄՆ տնտեսության վրա տարեկան նստում է 500 միլիարդ դոլար՝ որպես արտադրողականության անկում, չստացված հարկային մուտքեր և առողջապահական ծախսեր[22]: Ըստ այդմ՝ մարդկանց տրամադրության և ոգևորության բարձրացումը կարող է երկրի տնտեսական արդյունավետության վրա տեսանելի դրական ազդեցություն թողնել: Այսինքն՝ այս ոլորտի հետազոտությունները կարևոր են ոչ միայն առանձին անհատի վարքը և ինքնազգացողությունը հասկանալու, այլև հասարակական նշանակության մի շարք հարցեր վերլուծելու համար: Երջանկությունը ոչ միայն մարդու անհատական վարքում է էական դեր խաղում՝ բարելավելով առողջությունը և ավելացնելով աշխատանքի արտադրողականությունը: Այն ունի նաև սո-

[21] Տե՛ս OECD (2013), OECD Guidelines on Measuring SubjectiveWell-being, OECD Publishing, էջ 3: http://dx.doi.org/10.1787/9789264191655-en

[22] Տե՛ս **Davies William,** նշվ. աշխ., էջ 17:

ցիալական նշանակություն. տարբեր երկրներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սոցիալական կապիտալի և երջանկության մակարդակները գտնվում են խիստ կոռելյացիայի մեջ: Մասնավորապես, երջանիկ մարդիկ ավելի պատրաստակամ են սոցիալական շփումների, ավելի հոժարաբար են պատասխանում օգնության խնդրանքին և ավելի մեծ հավանականությամբ են բարոյական վարքագիծ ցուցաբերում[23]: Սոցիալական կապիտալի բարձր մակարդակն իր հերթին դրական ազդեցություն է թողնում տնտեսական ազատությունների և տնտեսական զարգացման վրա, նպաստավոր պայմաններ ստեղծում սոցիալական նորարարությունների և ներդրումների համար[24]: Երջանիկ մարդիկ ավելի հաճախ են զբաղվում կամավորական աշխատանքով և ներգրավվում քաղաքացիական հասարակության ինստիտուտներում: Իհարկե, այստեղ կարող է հարց ծագել. արդյո՞ք երջանկությունը չունի «սահմաններ», չի՞ կարող արդյոք չափից դուրս շատ երջանկությունը հասարակության համար ունենալ անցանկալի հետևանքներ[25]: Ընդունելով հարցի տեսական կարևորությունը թե՛ հոգեբանության և թե՛ սոցիալ-փիլիսոփայական տեսանկյունից՝ կարծում ենք՝ իրական կյանքի համար անհրաժեշտ է կատարել մի քանի ճշգրտում: Նախ՝ պետական քաղաքականության ռազմավարություն ծրագրելու առումով «չափից ավելի» երջանկության հարցը գուցե կարող է քննարկման առարկա լինել այնպիսի երկրների համար, որոնք հասել են տնտեսական և սոցիալական զարգացման առաջնակարգ մակարդակների, օրինակ՝ սկանդինավյան երկրները, որոնք էլ ավանդաբար առաջատար են «Երջանկության համաշխարհային զեկույցներում»: Այնինչ՝ հետխորհրդային զարգացող և առհասարակ ժամանակակից պետությունների մեծ մասի համար այս հարցը դուրս է քաղաքական օրակարգից և կարող է արդիական լինել թերևս միայն նեղ մասնագիտական քննարկումներում:

Երջանկության քանակական չափումները և համապատասխան ցուցիչների շարունակական բարելավումը անխուսափելիորեն առաջ են բերում նաև դրա բովանդակային և որակական բաղադրիչներին վերաբերող հարցերի ուսումնասիրության անհրաժեշտություն: Օրինակ՝ ժամանակակից եվրոպացու և տիբեթյան վանականի երջանկության աղբյուրների և մարդու վարքի վրա թողած ազդեցության տարբերություններն ակնհայտ են ոչ միայն գիտնականի, այլև հասարակ մարդու համար: Ուստի համապատասխան հետազոտություններում սպասվում են հետաքրքիր նոր զարգացումներ և չափումներ:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ որպես չափելի և բարելավվող

---

[23] Տե՛ս **Cahit Guven,** Are Happier People Better Citizens? // Kyklos, Vol. 64 –May 2011 – № 2, 178

[24] Տե՛ս նույն տեղը, էջ 181:

[25] Տե՛ս **Шавердян Г.** Под управлением Молоха (Մողոքի կառավարման ներքո) // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», 2018, № 3 (27), էջ 49:

երևույթ՝ սուբյեկտիվ բարեկեցության հետազոտությունները այսօր աստիճանաբար վերածվում են պետական քաղաքականության արդյունավետության յուրահատուկ կողմնորոշիչների: Դրա անհերքելի վկայությունն են երջանկության հետազոտման ոլորտում տեղի ունեցող հասարակական, տնտեսական, գիտական և քաղաքական ակտիվ գործընթացները՝ հրապարակումները, գիտաժողովները, քննարկումները, տվյալների բազաների ստեղծումը և երջանկության ցուցիչների կարևորությունն ընդունած պետությունների հետզհետե մեծացող աշխարհագրությունը: Ի վերջո, ցանկացած երկրի հաջողությունը կախված է ոչ միայն նրանից, թե ինչքանով են նրանք հարուստ, այլ նաև այն բանից, թե ինչպես է երկրի բնակչությունը դիմակայում անբարենպաստ պայմաններին, սթրեսին, հիվանդություններին և կարողանում հանգստություն, երջանկություն և բավարարվածություն զգալ իր կյանքում:

Բանալի բառեր - *սուբյեկտիվ բարեկեցություն, երջանկություն, քաղաքականություն, ցուցիչ, ՀՆԱ, տնտեսագիտություն, ուտիլիտարիզմ*

АРМАН КАРАГУЛЯН – *Субъективное благосостояние как индикатор эффективности публичной политики.* – Стремление к счастью атрибутивное свойство человека. Веками об этом говорили философы, но сравнительно мало работ, где счастье рассматривалось как объект государственной политики. В последние десятилетия активно начались разработки методов измерения субъективного благосостояния; тем самым наряду с классическими экономическими подходами в политику вносятся новые индикаторы эффективности. В статье анализируются понятийный аппарат таких исследований, взаимоотношения «счастья» и «благополучия» (экономического и субъективного), примеры теоретических и удачных политических инициатив, дальнейшие перспективы таких исследований.

Ключевые слова: *Субъективное благосостояние, счастье, политика, индикатор, ВВП, экономика, утилитаризм*

ARMAN GHARAGULYAN – *Subjective Well-Being as an Efficiency Indicator of Public Policy.* – The pursuit of happiness is a human attributive feature. For centuries, philosophers have touched upon this topic, but there are relatively few works where happiness is seen as an object of public policy. In recent decades, the development of methods for measuring subjective well-being has evolved, thereby integrating new performative indicators into policies along with classic economic approaches. The article analyzes the conceptual apparatus of such studies, the relationship between “happiness” and “well-being” (economic and subjective), examples of theoretical and successful political initiatives, and further prospects for such studies.

Key words: *subjective well-being, happiness, politics, indicator, GDP, economics, utilitarianism*

Ներկայացվել է՝ 17.01.2020, Գրախոսվել է՝ 22.01.2020, Ընդունվել է տպագրության՝ 25.07.2020